## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
**Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ**

2020 թվականի նոյեմբերի 27-ին կնքված № 11-20 պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

**Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմն** (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի, որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից,

**«LINKLATERS S.L.P.» ընկերությունն** (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս գործընկեր Ֆրանցիսկո Մալագայի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

երկուսը միասին (այսուհետ՝ «Կողմեր»)՝ հիմք ընդունելով 2020 թվականի նոյեմբերի 27-ին կնքված № 11-20 պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրն (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին Պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր»)՝ հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշում են

## AMENDMENT AGREEMENT № 1

To the state procurement agreement on provision of legal services for state needs № 11-20 on November 27, 2020

**Office of the Prime Minister of the Republic of Armenia** (the "Client"), represented by Arayik Harutyunyan, Chief of Staff, acting pursuant to the Charter of the Client, on the one hand;

**"LINKLATERS S.L.P."** (the "Contractor"), represented by Partner Francisco Málaga, acting pursuant to the Charter of the Contractor, on the other hand;

collectively referred to as the "Parties", based on the state procurement agreement on provision of legal services for state needs № 11-20 on November 27, 2020, concluded on November 27, 2020 (the "Contract"), entered into this amendment agreement (the "Agreement") on the following:

### 1. Scope of the Agreement

1.1. The Parties mutually agree to add clause 5.7 to the Contract which shall read as follows: "5.7 If the Contractor, upon the Client's written

Պայմանագրում ավելացնել 5.7 կետը՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«5.7 Եթե Կատարողին Պատվիրատուի գրավոր (էլեկտրոնային) պահանջով հանձնարարվում է իրականացնել փաստաբանական և իրավաբանական ծառայություններ, որոնք ներառված չեն պայմանագրի հավելվածներ Բ-ով և Դ-ով սահմանված Տեխնիկական բնութագրի ծառայության շրջանակում («Լրացուցիչ ծառայություն»), Պատվիրատուն Կատարողի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերի և Կողմերի կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա կատարում է մատուցված լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարում: Յուրաքանչյուր Լրացուցիչ ծառայության վճարը Կողմերը համաձայնեցնում են նախօրոք՝ գրավոր (էլեկտրոնային) եղանակով»:

(via email) request, is instructed to perform additional legal services that do not fall within the scope of the Services defined in the Technical Specification of Exhibit B and in Exhibit D to the Contract (hereinafter "the Additional Services"), the Client pays for the rendered Additional Services based on the billing documents submitted by the Contractor and the Delivery Statement signed by the Parties. The service fees for the Additional Services shall be preliminarily agreed by the Parties in writing (via email)".

1.2. Միաժամանակ, Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել նախքան սույն Համաձայնագրի կնքումը վերջինիս հանձնարարությամբ Կատարողի մատուցած այնպիսի փաստաբանական և իրավաբանական ծառայությունների դիմաց, որոնք ներառված չեն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների շրջանակի մեջ:

1.2. The foregoing is without prejudice to the Client's obligation to pay for the legal services that do not fall within the scope of the Services agreed in the Contract incurred by the Contractor and which were provided prior to the signing of this Agreement as per the Client's instructions

## 2. Այլ դրույթներ

2.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջությամբ կատարելը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 (2) հոդվածի՝ սույն Համաձայնագրի դրույթները

## 2. Miscellaneous

2.1. This Agreement shall take effect from the date of signature of the last signing Party and shall be valid until duly and complete fulfilment of the obligations of the Parties set forth by the Contract. Pursuant to the Article 441 (2) of the RA Civil Code, the provisions of this Agreement shall

կիրառվում են 2020 թվականի հունիսի 9-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ և ուժի մեջ:

2.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, հայերեն և անգլերեն լեզուներով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

also apply to the relationship between the Parties, which arose starting from June 9, 2020.

2.2. The remaining provisions of the Contract shall remain unchanged and in full force.

2.3. This Agreement is composed of 3 (three) pages, it is concluded in two copies of equal legal effect. Each Party shall be provided with one copy of the Agreement.

**Պատվիրատու՝/Client:**
**ՀՀ վարչապետի աշխատակազմ**
**The Office of the Prime Minister of the Republic of Armenia**
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն / Operational Department of MFA, RA
Հ/Հ՝/ N/A: 900011034056

**Վարչապետի աշխատակազմի ղեկավար՝** Արայիկ Հարությունյան
**Chief of Staff:** Arayik Harutyunyan

13 December 2021
(ստորագրման ամսաթիվ / date of signature)

**Կատարող՝/Contractor:**
**"LINKLATERS S.L.P." ընկերություն**
**"LINKLATERS S.L.P." LLC**
**Բանկ՝ / Bank:** Caixabank, S.A.
**Հ/Հ՝ / AN:** 2100 9194 1622 0097 0413
**Swift Code:** CAIXESBBXXX
**IBAN:** ES65

**Գործընկեր՝ Ֆրանցիսկո Մալագա**
**Partner: Francisco Málaga**

9 December 2021
(ստորագրման ամսաթիվ / date of signature)